

ՍԱՆՄԱՍՆԵՐ  
ԱՆՉՆԱԿԱՆ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱՑ  
ԱՂՕԹՔԻ ՀԱՄԱՐ

ՄԱՍԿ Բ. - Մաղձոս 26-46

---



*Թարգմանեց ու խմբագրեց՝*  
ՄԱՇՏՈՑ ՎԱՀԷ ՂԱԶԱՐԵԱՆ

## ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

*Սիրելի Ընթերցող,*

*օգտագործելով հաղորդակցութեան ներկայ միջոցները, անձնական նախաձեռնութեամբ՝ փորձում եմ իմ համեստ նպաստս բերել մեր ազգային հոգեւոր կեանքին, նաեւ համացանցի միջոցով տարածելով քրիստոնէական փոքրիկ գրութիւններ, այսպիսով յաղթահարելով աշխարհագրական սահմանափակումներն ու առաքումի ժամանակները: Փափաքս է հաղորդել քեզ այն՝ ինչ ինձ հաղորդուեց Նախախնամութեան գծած զանազան ճանապարհներով:*

*Կարող ես քո մասնակցութիւնը բերել Աստուծոյ Խօսքին մատուցուած այս ծառայութեանը, հաղորդելով քո մերձաւոր ու հեռաւոր ծանօթներին ահա այս համացանցային հասցէն.*

[gradaran@mashtoz.org](mailto:gradaran@mashtoz.org)

*Այս հասցէին գրելով, նրանց հասցէները նոյնպէս կ'անցնեն իմ անուանացանկի մէջ եւ յաջորդաբար նրանք նոյնպէս կը ստանան հոգեւոր նոր գրութիւնների հրատարակումը տեղեկացնող նամակները: Այս ծառայութիւնն անվճար է:*

*Այս գործին որեւէ առաջարկ կամ օգնութիւն հասցնելու, որեւէ տեղեկութիւն խնդրելու կամ հարցումներ ներկայացնելու համար կարող ես գործածել համացանցային վերոնշեալ հասցէն:*

*Կանխայայտ շնորհակալութեամբ եւ լաւագոյն մաղթանքներով,  
եղբայրդ ի Քրիստոս Յիսուս՝*

*Մաշտոց Մատէ Ղազարեան*

ՍԱՂՄՈՍԱՐԱՆԸ  
ԱՆՁՆԱԿԱՆ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱՅ  
ԱՂՕԹՔԻ ՀԱՄԱՐ

ՍԱՂՄՈՍ 26 [25]

Սիրում եմ ասնդ գեղեցկությունը, Տէր

Կցորդ. Միայն մեկի՝ Յիսուս Քրիստոսի Հնազանդութեամբ,

Թողրը արդար Համարոնեցին (Հմմտ. Հում 5, 19):

Կամ. Այսպիսի վաճառյալեղի կարելի է ունենել. սորբ, անմեղ, ամբիջ (Եբր 7, 26):

Կամ. Մասնուելով Սրբին, որ յեղ կանչեց,

դու՛ն յայնպէս սորբ դարձել յեր վարձում (Հմմտ. 1Պտ 1, 15):

<sup>1</sup> Դասութի:

Արդարութիւն արա ինձ, Տէր,  
ամբծութեան ճանապարհով ընթացայ.  
վստահութեամբ յանձնուեցի Տիրոջը,  
չեմ կարող սասանուել, ուրեմն.

<sup>2</sup> քննիր ինձ, Տէր, եւ փորձիր ինձ,  
կրակից անցկացրու սիրտս ու միտքս:

<sup>3</sup> Մէրդ աչքերիս առջեւ է,  
ճշմարտութեանդ համաձայն եմ ես ընթանում.

<sup>4</sup> չեմ նստում կռապաշտ մարդկանց հետ,  
կեղծաւոր մարդկանց հետ չեմ քայլում.

<sup>5</sup> ատում եմ ամբարիշտների ընկերութիւնը,  
չարագործների հետ միասին ես չեմ նստում:

<sup>6</sup> Անմեղութեան մէջ եմ լուսանում իմ ձեռքերը  
եւ պար եմ բռնում խորանիդ չորս կողմը, Տէր.

<sup>7</sup> Հնչեցնելու համար շնորհակալութեան իմ երգը,  
պատմելու համար Քո բոլոր հրաշքները.

<sup>8</sup> սիրում եմ տանդ գեղեցկութիւնը, Տէր,  
վայրը՝ ուր բնակում է Քո փառքը:

<sup>9</sup> Մեղաւորների շարքին մի՛ դասիր անձս,  
արիւն հեղողների շարքին՝ իմ կեանքը.

<sup>10</sup> նրանց ձեռքը լի է նենգութեամբ,  
նրանց աջը կաշառքներ է սփռում:

<sup>11</sup> Ես, մինչդեռ, ամբծութեամբ ընթացայ,  
փրկիր ինձ, ողորմած եղիր իմ նկատմամբ.

<sup>12</sup> իմ ոտքը հաստատուն է ուղիղ ճանապարհի վրայ,  
հաւաքներում օրհնելու եմ Տիրոջը:



Կցորդ. *Հոգեցեւէ, Հասարակարան եղեւ Հասարակ մեջ,  
ուժեղ եղեւ եւ խաջութեամբ Գործեցեւ (Հմմտ. 1Կր 16, 13):*

Կամ. *Ո՞վ կը բաժանի մեզ Քրիստոսի սիրոց.  
մի՞թէ նեղութիւնը, կամ արդարութիւնը, կամ Հալածանէր (Հում 8, 35):*

<sup>1</sup>Գաւթի:

Տէրը իմ լոյսն է եւ իմ փրկութիւնը,  
ուժի՞ց պիտի վախենամ.

Տէրը իմ կեանքի զօրութիւնն է,  
ուժի՞ց պիտի սարսափ զգամ:

<sup>2</sup>Եթէ չարագործներն հարձակուեն իմ դէմ,  
յօշոտելու համար մարմինս,  
թշնամիներն ու հակառակորդներն իրենք իսկ  
կը սայթաքեն ու կ'ընկնեն:

<sup>3</sup>Եթէ իմ դէմ պատերազմի պատրաստուի մի բանակ,  
իմ սիրտը չի վախենում.  
Եթէ իմ դէմ սկսուի մի ճակատամարտ,  
այդ ժամանակ նոյնպէս՝ ես վստահ եմ:

<sup>4</sup>Միայն մի բան խնդրեցի Տիրոջից,  
միայն այս բանն եմ ես փափաքում.  
բնակուել Տիրոջ տանը  
կեանքիս բոլոր օրերում,  
դիտել Տիրոջ գեղեցկութիւնը  
եւ փնտռել նրա ներկայութիւնը:

<sup>5</sup>Իր օթեկանում ապաստան է շնորհում ինձ  
չար օրերում.  
Իր վրանի գաղտնարաններում թաքցնում է ինձ,  
բարձրացնում է ինձ ժայռի վրայ:

<sup>6</sup>Իսկ այժմ, նա կրկին բարձրացնում է իմ գլուխը  
թշնամիների վրայ, որ պաշարում են ինձ.  
Գնալու եմ իր վրանում մատուցելու  
ցնծութեան զոհը,  
օրհնութեան մեղեդիներով  
երգելու եմ Տիրոջը:

**D**

<sup>7</sup>Տէր, լսիր իմ ձայնը. ես աղաղակում եմ  
ողորմիր ինձ, պատասխանիր,

<sup>8</sup>սիրտս ինձ կրկնում է Քո հրաւէրը.  
«Փնտռեցէք իմ երեսը».

Քո երեսն եմ, Տէր, ես փնտռում.  
<sup>9</sup>Ինձնից մի՛ թաքցրու Քո երեսը:

Զայրոյթիդ մէջ մի՛ մերժիր ծառայիդ,  
Դու ես իմ օգնականը.  
մի՛ թող ինձ, մի՛ լքիր ինձ,  
ո՛վ Աստուած, փրկուեթիւն իմ.  
<sup>10</sup> Եթէ հայրս ու մայրս լքեն ինձ,  
Տէրը կ'ընդունի ինձ:

<sup>11</sup> Յոյց տուր ինձ Քո ճանապարհը, Տէր,  
եւ առաջնորդիր ինձ արդար ճանապարհով.  
<sup>12</sup> մի՛ մատնիր ինձ նեղիչներիս ցանկութիւններին,  
անարդար վկաներ դուրս եկան իմ դէմ,  
անարդարութիւնը ստեց ինքն իրեն:

<sup>13</sup> Ես հաւատում եմ, որ տեսնելու եմ Տիրոջ բարութիւնը  
ողջերի երկրում.  
<sup>14</sup> յուսա՛ Տիրոջը, ուժեղ եղիր, ամրապնդիր սիրտդ,  
յուսա՛ Տիրոջը:



## ԱՂՂԱՌԱ 28 [27]

Մի՛ լռիր ինձ հետ

**Կցորդ. Մարտոկոմի Որդին շոգով Գալուսի և Կատոնով**  
Եւ իրաւանչիւրին Կարոցելուս Եւ ըստ իր Գործերի (Հմմտ. Մտթ 16, 27):  
**Կամ. Եւ Գալուսի Եւ շոգով, Բերելով իմ վարձարոտիւնը,**  
Կարոցելուս Կամար իրաւանչիւրին ըստ իր Գործերի (Հմմտ. Յյտ 22, 12):

<sup>1</sup> Գալթի:

Դէպի Քեզ եմ աղաղակում, Տէր, վէ՛մ իմ,  
մի՛ լռիր ինձ հետ.  
որովհետեւ եթէ Դու լուռ մնաս,  
փոսի մէջ կ'իջնեմ ես:

<sup>2</sup> Լսիր իմ աղաչանքի ձայնը,  
երբ կանչում եմ Քեզ,  
երբ ձեռքերս բարձրացնում եմ  
դէպի Սրբերի Սուրբը:

<sup>3</sup> Դուրս մի՛ նետիր ինձ ամբարիշտների հետ,  
չարագործների հետ միասին.  
նրանք ասում են «խաղաղութիւն» իրենց մերձաւորին,  
բայց չարութեամբ իրենց սրտերից ներս:

<sup>4</sup> Հատուցիր նրանց ըստ իրենց գործերի,  
իրենց չարասիրտ վարքի համաձայն.  
Հատուցիր նրանց ըստ իրենց ձեռքերի գործի,  
տուր նրանց վարձը:

<sup>5</sup> Ձեռն հասկանում Տիրոջ միջամտութիւնները,  
գործերը Նրա ձեռքերի.

բայց Նա կործանելու է նրանց մինչեւ երկիր,  
նրանց այլեւս երբեք ոտքի չի կանգնեցնելու:

## D

<sup>6</sup>Թող օրհնեալ լինի Տէրը,  
լսեց իմ աղաչանքի ձայնը.

<sup>7</sup>Տէրը իմ ուժն է ու իմ պաշտպանութիւնը,  
սիրտս Նրան է վստահում.  
օգնեց ինձ, ցնծում է սիրտս,  
եւ ես երգովս շնորհակալութիւն եմ Նրան յայտնում:

<sup>8</sup>Տէրը իր ժողովրդի զօրութիւնն է,  
փրկութեան ապաստան՝ իր Մեսիայի համար.

<sup>9</sup>փրկիր Քո ժողովուրդը, օրհնիր Քո ժառանգութիւնը,  
հովուիր եւ թրկունք կանգնիր նրան յաւիտեան:



## ԱՂՂԱՌԱ 29 [28]

Տիրոջ ձայնը

Կցորդ. Աստուծին. Ո՞վ է սա, որ եմն, որ հրամայում է վամուն ու ջրին (հմմտ. ՂԿ 8, 25):  
կամ. Յանկարծ երկնից մի որոյում եկաւ  
եւ կրակի նման ուղիւն եր յայրնուեցին (հմմտ. Գրծ 2, 2-3):

<sup>1</sup>Աղղառու: Գալթի:

Մատուցէք Տիրոջը, Աստուծոյ որդիներ,  
մատուցէք Տիրոջը փառք եւ զօրութիւն.

<sup>2</sup>մատուցէք Տիրոջը իր Անուան փառքը,  
երկրպագեցէք Տիրոջը իր Սրբութեան վայրում:

<sup>3</sup>Տիրոջ ձայնը ջրերի վրայ է,  
փառքի Աստուածը որոտաց,  
Տէրը, հեղեղային ջրերի վրայ:

<sup>4</sup>Տիրոջ ձայնը հզօր է,  
Տիրոջ ձայնը փառաւոր է,

<sup>5</sup>Տիրոջ ձայնը փշրում է մայրիները:

Տէրը փշրում է Լիբանանի մայրիները,

<sup>6</sup>Հորթի նման ցատկոտել է տալիս Լիբանանին,  
երիտասարդ գոմէշի նման՝ Սիրիոնին:

<sup>7</sup>Տիրոջ ձայնը առաքում է կրակի լեզուներ,

<sup>8</sup>Տիրոջ ձայնը դզրդացնում է անապատը,  
Տէրը ցնցում է Քաղէսի անապատը:

<sup>9</sup>Տիրոջ ձայնը սասանում է կաղնիները,  
մերկացնում է մինչեւ իսկ ծաւալուն անտառները.  
Նրա օթեւանում ամէն բան աղաղակում է. «Փա՛ռք»:

<sup>10</sup> Տէրն իշխում է փոթորիկին,  
Տէրը բազմում է Թագաւոր ընդմիշտ.  
<sup>11</sup> Տէրը զօրութիւն է տալիս իր ժողովրդին,  
Տէրն օրհնում է իր ժողովուրդը խաղաղութեամբ:



## ԱՊՂԱՌՈՒ 30 [29]

Գժոխքից դուրս հանեցիր իմ կեանքը

**Կցորդ.** Ես մեռած էի, Բայց այժմ ապրում եմ յաւեր,  
Եւ ունեմ մահուան եւ դժոխքի Բանալիները (Հմմտ. Յյտ 1, 18):  
**Կամ.** Ես արուած Ինձը, Կարճատեւ քառասունօրեայ յետոյ,  
Կը Հաստատուի յետեւ, Կը զօրացնի եւ անասան կը դարձնի յետեւ (Հմմտ. 1 Պտ 5, 10):  
**Կամ.** Մա՛ր զՀաւատարմութիւնս, նոյնիսկ եթէ մահանայ՝ կ'ապրի (Յվհ 11, 25):  
**Կամ.** Դու՛ն էլ պիտի արքայանայ ելի, իսկ աշխարհն՝ ուրախանայ.  
Բայց յետ օրեր իր փոխուելու՝ Ես ցնծութեան (Հմմտ. Յվհ 16, 20):  
**Կամ.** Յիսուս նրանց ցոյց տուց իր յետեւերն ու կողք,  
Եւ աշակերտներն ուրախացան՝ քեանքուով Տիրոջը (Հմմտ. Յվհ 20, 20):

<sup>1</sup> Ապղմոս: Տաճարի ընծայման տօնի երգ: Գալթի:

<sup>2</sup> Մեծարում եմ Քեզ, Տէր, կրկին ոտքի կանգնեցրիր ինձ,  
Հթոյլատրեցիր՝ որ ցնծան թշնամիներս.

<sup>3</sup> Երբ դէպի Քեզ աղաղակեցի, Տէր,  
Դու բժշկեցիր ինձ, Աստուած իմ եւ Տէր.

<sup>4</sup> Գժոխքից դուրս հանեցիր իմ կեանքը,  
Ինձ կրկին կեանք շնորհեցիր, գերեզման իջածների մէջ:

<sup>5</sup> Օրհնութիւններ երգեցէք Տիրոջը, Նրա հաւատացեալներ,  
Երախտագիտութիւն մատուցէք՝ յիշելով իր սուրբ Անունը.

<sup>6</sup> Նրա բարկութիւնը մի պահ է տեւում,  
Նրա սէրը տեւում է ամբողջ կեանքով մէկ.  
Եթէ երեկոյեան հիւր է եկել վիշտը,  
առաւօտեան պոռթկում է ուրախութիւնը:

<sup>7</sup> Ասում էի բարօրութեանս օրերում.  
«Ոչինչ ինձ չի սասանի»,

<sup>8</sup> որովհետեւ բարեացակամութեանդ համաձայն, Տէր,  
լեռան նման հաստատուն էիր դարձրել ինձ.  
Բայց երբ թաքցրիր ինձնից երեսդ,  
սարսափը տիրեց ինձ:

<sup>9</sup> Դէպի Քեզ աղաղակեցի, Տէր,  
Իմ Տիրոջից խնդրեցի ողորմութիւն.

<sup>10</sup> «Քո համար ի՞նչ օգուտ ունի իմ մահը,  
եթէ ես իջնեմ փոսի մէջ.

մի՞թէ փոշին կարող է շնորհակալ լինել Քեզ,  
մի՞թէ կարող է պատմել հաւատարմութիւնդ.

<sup>11</sup> ունկն դիր, Տէր, ողորմիր ինձ,  
Տէր, օգնութեան հասիր ինձ»:

<sup>12</sup> Դու իմ ողբը պարի փոխեցիր,  
սուգի զգեստս՝ տօնական հանդերձանքի.

<sup>13</sup> այս իսկ պատճառով, ներաշխարհս լուռ չի մնում եւ երգում է Քեզ,  
Տէր Աստուած իմ, յաւիտեան շնորհակալ եմ լինելու Քեզ:



## ՍԱՂԱՌՈՒ 31 [30]

Քո ձեռքն եմ յանձնում իմ հոգին

Կցորդ. Ո՛վ քառասուն՝ է Ասորշոյ կամէի Համաշայն ,  
Թող իր կեանքը վստահի Հասարակի Արարչին (Հմմտ. 1 Պտ 4, 19):

Կամ. Տէր Յիսուս, ընդունիր իմ Հոգին  
Եւ այս Գործը նրանց Համար մեզ վ՛ մե՛ Համարիր (Հմմտ. Գրծ 7, 59-60):

<sup>1</sup> Երգչախմբի ղեկավարի համար: Սաղմոս: Գալթի:

<sup>2</sup> Քեզ եմ, Տէր, ապաւինում,  
յաւիտեան ամօթով չմնամ.  
արդարութեամբդ ազատիր ինձ,

<sup>3</sup> լսիր եւ շտապիր ինձ օգնութեան:

Իմ համար ապահով վէմ եղիր,  
ամուր մի վայր, որ փրկում է ինձ.

<sup>4</sup> Իմ անառիկ ամրոցը Դու ես,  
Անուամբդ կողմնորոշիր ինձ ու առաջնորդիր:

<sup>5</sup> Դուրս հանիր ինձ վրաս նետուած ցանցից,  
քանի որ Դու ես իմ պատսպարանը.

<sup>6</sup> Քո ձեռքն եմ յանձնում իմ հոգին,  
Դու ինձ փրկում ես, Տէր, հաւատարմութեան Աստուած:

<sup>7</sup> Ես զազրում եմ կուռքերի ոչնչութիւնը պաշտողներից,  
եւ ընդհակառակն՝ հաւատում եմ Տիրոջը.

<sup>8</sup> ցնծալու եւ ուրախանալու եմ սիրոյդ մէջ:

Դու, որ տեսնում ես իմ խոնարհեցումը  
եւ գիտես կեանքիս նեղութիւնները.

<sup>9</sup> չես յանձնի ինձ թշնամու ձեռքը,  
բաց ու ընդարձակ վայրերում կ'առաջնորդես քայլերս:

## D

<sup>10</sup> Ողորմիր ինձ, ո՛վ Տէր,  
նեղութեան մէջ եմ ես.  
Վիշտը սպառում է աչքերս,  
կոկորդս ու աղիքներս:

<sup>11</sup> Կեանքս հանգչում է տրտմութեան մէջ,  
տարիներս՝ տառապանքի մէջ.  
պատժից տկարանում է իմ ուժը  
եւ մաշւում են իմ ոսկորները:

<sup>12</sup> Բոլոր հակառակորդներիս ծաղրի առարկան եմ,  
մինչեւ իսկ՝ ինձ մօտիկներին.  
սարսափ եմ ազդում իմ ծանօթներին,  
ով տեսնում է ինձ՝ ինձնից խուսափում է.

<sup>13</sup> ինչպէս մի մեռեալ, սրտից մոռացուած,  
դարձել եմ թափուելիք աւելցուկ:

<sup>14</sup> Ես լսում եմ ամբօխի զրպարտութիւնները,  
ահ ու դող չորսբոլորս.  
խորհուրդ են անում իմ դէմ,  
համաձայնում են սպանել ինձ:

<sup>15</sup> Բայց ես վստահում եմ Քեզ, Տէր,  
ասում եմ Քեզ. «Աստուած իմ».

<sup>16</sup> իմ օրերը Քո ձեռքում են,  
թշնամիներից ու հալածիչներից ազատիր ինձ:

<sup>17</sup> Ծառայիդ յայտնիր Քո երեսը,  
փրկիր ինձ սիրոյդ համաձայն.

<sup>18</sup> Տէր, թող ես ամօթով չմնամ,  
քանի որ դէպի Քեզ աղաղակեցի:

Ամօթով թող մնան չարագործները,  
դժոխքի լուութեան մէջ.

<sup>19</sup> Թող համր մնան շրթունքները, որ զրպարտում են արդարին  
բարկութեամբ, արհամարհանքով ու հպարտութեամբ:

## D

<sup>20</sup> Որքա՛ն մեծ է Քո սէրը,  
այն վերապահում ես Քեզնից երկնչողներին,  
այն բաշխում ես բոլորի առաջ  
նրանց՝ ովքեր Քեզ են ապաւինում:

<sup>21</sup> Թաքցնում ես նրանց դէմքիդ ծածկոյթի ներքոյ,  
մարդկանց խարդախութիւններից հեռու.  
պատսպարում ես նրանց վրանիդ ներսում,  
լեզուների վիճաբանութիւններից հեռու:

<sup>22</sup> Օրհնեալ թող լինի Տէրը.  
Նրա սէրն ինձ համար հրաշքներ է գործում,  
նաեւ երբ քաղաքը պաշարուած է:

<sup>23</sup> Սարսափահար, ասում էի.  
«Բացառուած եմ Քո ներկայութիւնից».  
Դու, սակայն, լսեցիր իմ աղաչանքը,  
դէպի Քեզ ուղղուած աղաղակիս ձայնը:

<sup>24</sup> Սիրեցէք Տիրոջը, դուք՝ հաւատացեալներ,  
Տէրը պաշտպանում է իրեն վստահողներին.  
բայց Նա հափից դուրս հատուցում է  
նրանց՝ ովքեր հպարտութեամբ են գործում.

<sup>25</sup> Գօրեղ եղէք, ամրապնդեցէք ձեր սրտերը,  
դուք բոլորդ՝ որ յուսացել էք Տիրոջը:



## ԱՊՂԱՌՈՒ 32 [31]

Ձնշեցիւ իմ յանցանքն

Կցորդ. Այլէս ոչ մի պարտաւարութիւն չկայ նրանց Համար,  
ովէր Քրիստոս Յիսոսի մեջ են (Հմմտ. Հում 8, 1):

Կամ. Ձեր միջեւ թոյալաւ սեր ունեցե՛լ,  
որովհետեւ սերը շաշկում է բազում յանցանկներ (Հմմտ. 1 Պտ 4, 8):

Կամ. Յիսոս ասաց. Ես նոյնպէս չեմ պարտաւարութե՛լ,  
գնա եւ այլէս մի՛ մեղանշիր (Հմմտ. Յվհ 8, 11):

Կամ. Երկնի ուժերն աւելին մեծ ուրախութիւնն է լինելու պարզի եկող միայն մեկ մեղաւորի Համար,  
վասն որ պարտութիւն Համար՝ որոնք պարզի Գալու կարելի չունեն (Հմմտ. Ղկս 15, 7):

Կամ. Եթէ խոսքովանենք մեր մեղքերը,  
Նա կը մա՛կրի մեզ ամեն անարտաբանութեանից (Հմմտ. 1 Յվհ 1, 9):

<sup>1</sup> Գաւթի: Մասփիլ:

Երանի՛ր այն մարդուն, որ արձակում ստացաւ մեղքից,  
ներում գտաւ անօրէնութիւնից.

<sup>2</sup> Երանի՛ր այն մարդուն, որին Տէրը յանցանք չվերագրեց  
եւ նրա հոգում կեղծիք չկայ:

<sup>3</sup> Ես լռում էի եւ սպառում էին իմ ոսկորները  
ամբողջ օրը հեծեծալով.

<sup>4</sup> ձեռքդ ծանրանում էր իմ վրայ  
գիշեր ու ցերեկ,  
այրող պապակի փոխուեց  
ամբողջ կենսունակութիւնս:

<sup>5</sup> Յայնժամ խոստովանեցի իմ մեղքը,  
չթաքցրի իմ յանցանքը,  
ասացի. «Կը խոստովանեմ ինքս իմ դէմ  
վիրաւորանքները, որ հասցրել եմ Տիրոջը».  
Եւ Դու կրեցիր  
իմ մեղքի յանցանքը:

<sup>6</sup> Այս իսկ պատճառով, թող աղօթի Քեզ ամէն հաւատացեալ  
տրամութեան ժամին.  
նոյնիսկ եթէ ջրհեղեղի յորձանքներն արձակուեն,  
չեն կարող հասնել նրան:



<sup>10</sup> Տէրը ջնջում է հեթանոսների մտածումները,  
կործանում է ժողովուրդների ծրագրերը:

<sup>11</sup> Բայց Տիրոջ կամքն իրականանում է միշտ,  
սերնդէ սերունդ՝ Նրա սրտի ծրագրերը:

## D

<sup>12</sup> Երանի՛ր այն ժողովուրդին, որի Աստուածը Տէրն է,  
այն ժողովուրդին, որին Նա ընտրել է որպէս ժառանգութիւն:

<sup>13</sup> Երկնային բարձունքներից Տէրը դիտում է,  
Նա տեսնում է բոլոր մարդկանց:

<sup>14</sup> Իր բնակութեան վայրից նա գննում է  
երկրի բոլոր բնակիչներին:

<sup>15</sup> Նա Ինքն է կաղապարել իւրաքանչիւրի սիրտը  
եւ հասկանում է նրանց բոլոր արարքները:

<sup>16</sup> Թագաւորի փրկութիւնը իր մեծ զօրքի մէջ է,  
հսկան չի ազատում իր մեծ զօրութեամբ:

<sup>17</sup> Եղբայրների համար՝ ձին մի խաբկանք է,  
բանակը չի կարող փրկութիւն պարգեւել:

<sup>18</sup> Տիրոջ աչքերը իրենից երկնչողների վրայ են,  
նրանց վրայ՝ ովքեր յուսացել են իր սիրոյն:

<sup>19</sup> Նրանց կեանքն ազատելու համար մահից  
եւ ապրել տալու համար քաղցի օրերին:

<sup>20</sup> Այո՛, մենք սպասում ենք Տիրոջը,  
Նա՛ է մեր օգնութիւնը եւ մեր վահանը:

<sup>21</sup> Նրանում է ուրախանում մեր սիրտը,  
մենք հաւատում ենք Նրա սրբութեան Անուանը:

<sup>22</sup> Թող մեզ ընկերանայ Քո սէրը, Տէր,  
որովհետեւ Քեզ ենք մենք յուսացել:



## ԱՊՂԱՌԱ 34 [33]

Ճաշակեցէք եւ տեսէ՛ք՝ որ քաղցր է Տիրը

Կցորդ. Երանի՛ր Հոգեւոր ազգայններին, որովհետեւ նրանցն է երկնի՛ն արձայն-իւնը (Մտթ 5, 3):

Կամ. Եկէ՛ք ինչ մօտ, յոգնաթներ ու շանրաբեռնո՛ւսաթներ,  
եւ ես չեմ հանգիստ կը րամ (Մտթ 11, 28):

Կամ. Ո՛վ հետեւո՛ւմ է ինչ, խաւարի մէջ շէ՛ տայլ, այլ կ'ո՛ւնենայ կեանքի լոյսը (Յվհ 8, 12):

Կամ. Ես րդերի նման փայլեցել է աշխարհո՛ւմ,  
հասարակո՛ւն միացաթ մնալով կեանքի խօսիչն (հմմտ. Փլպ 2, 15-16):

<sup>1</sup>Գաւթի: Երբ Արիմեւիէի առաջ իւնթ ձեւացաւ եւ, նրա կողմից վնասուելով, գնաց:

<sup>2</sup>Օրհնում եմ Տիրոջը ամէն ժամ,  
ամէն ժամ Նրա օրհնութիւնը բերանումս է:

<sup>3</sup> Ես փառքս գտնում եմ Տիրոջ մէջ,  
թող լսեն խոնարհները եւ ուրախ լինեն:

<sup>4</sup> Իմ հետ մեծարեցէք Տիրոջը,  
միասին պանծացնենք Նրա Անունը.

<sup>5</sup> փնտռեցի Տիրոջը եւ Նա ինձ պատասխանեց,  
իմ բոլոր նեղութիւններից ազատեց ինձ:

<sup>6</sup> Մօտեցէք Տիրոջը եւ վերցրէք լոյս,  
անստուեր կը փայլեն ձեր երեսները.

<sup>7</sup> աղքատն աղաղակում է, Տէրը լսում է Նրան,  
իր բոլոր նեղութիւններից ազատում է նրան:

<sup>8</sup> Տիրոջ հրեշտակը զինուած պատրաստ է,  
ազատելու համար նրանց՝ ովքեր երկնչում են Նրանից.

<sup>9</sup> ճաշակեցէք եւ տեսէք՝ որ քաղցր է Տէրը,  
երանելի է այն մարդը, որ Նրան է ապաւինում:

<sup>10</sup> Երկնչէք Տիրոջից, Նրա սրբեր,  
Նրանից երկնչողին ոչինչ չի պակասում.

<sup>11</sup> Հարուստներն աղքատանում են եւ քաղցում,  
ոչ մի բարիք չի պակասում նրան՝ ով փնտռում է Տիրոջը:

## D

<sup>12</sup> Եկէք, որդիներ, լսեցէք ինձ,  
ձեզ կ'ուսուցանեմ Տիրոջ երկիւղը.

<sup>13</sup> կա՞յ մէկը, որ փափաքում է կեանքը  
եւ կամենում է օրեր՝ ճաշակելու համար բարիքը:

<sup>14</sup> Լեզուդ հեռու պահիր չարից,  
չրթունքներդ՝ ստախօսութիւնից.

<sup>15</sup> հեռու մնայ չարից եւ դործիր բարին,  
փնտրիր խաղաղութիւնը եւ նրան հետեւիր:

<sup>16</sup> Տիրոջ աչքերը արդարների վրայ են,  
Նրա ահանջներն ուշադիր են նրանց աղաղակին.

<sup>17</sup> Տիրոջ դէմքը չարագործների դէմ է,  
նրանց յիշատակը ջնջելու համար երկրից:

<sup>18</sup> Տէրը լսում է Իրեն կանչողներին,  
նրանց դուրս է հանում իրենց բոլոր նեղութիւններից.

<sup>19</sup> Տէրը մօտ է վշտահար սիրտ ունեցողներին  
եւ փրկում է ճնշուած հոգիներին:

<sup>20</sup> Բազմաթիւ են արդարի նեղութիւնները,  
բայց Տէրն ամէն անգամ ազատում է նրան.

<sup>21</sup> Հսկում է նրա բոլոր ոսկորների վրայ,  
նրանցից մէկն անգամ չի փշրուելու:

<sup>22</sup> Չարութիւնը սպանում է ամբարիշտին,  
պատժուելու է նա՝ ով ատում է արդարին.

<sup>23</sup> Տէրն ազատում է իր ծառաների կեանքը,  
չի պատժում նա՝ ով ապաւինում է Նրան:



## ԱՂՂԱՌԱ 35 [34]

Հուտով հասիր ինձ օգնութեան

- Կցորդ.** Բազում անձինք կեղծ վկայութիւններ էին կարարում Յիսուսի դէմ,  
բայց վկայութիւնները մեծեանց շէնն Ըստապարասիանում (Հմմտ. Մրկ 14, 56):
- Կամ.** Երանի՜ յեզ, երբ կը նախարէն յեզէ- կը Ըստապարասիանում  
ե- յեր դէմ մեծ շար բան կ'ասեն իմ պարճառով (Հմմտ. Մտթ 5, 11):
- Կամ.** Երանի՜ յեզ, եթէ նախարում էի Քրիստոսի Անուան Ըստապարասիանում,  
որովհետեւ Աստուծոյ Հոգին Ըստապարասիանում է յեր վրայ (Հմմտ. 1 Պտ 4, 14):

<sup>1</sup> Դասութի:

Դատիր, Տէր, նրան՝ ով դատում է ինձ,  
մարտնչիր նրա դէմ՝ ով իմ դէմ մարտնչում է.

<sup>2</sup> վերցրու վահանդ ու զրահներդ  
եւ շուտով հասիր ինձ օգնութեան:

<sup>3</sup> Ձեռքդ առ նիզակն ու սուրը  
ընդդէմ իմ հալածիչների.  
Խօսի՛ր եւ ասա՛ իմ սրտին.  
«Ես եմ քո փրկութիւնը»:

<sup>4</sup> Թող շփոթութեան մատնուեն եւ ամօթահար լինեն  
նրանք՝ ովքեր դաւադրում են կեանքիս դէմ.  
Ետ նահանջեն ու խոնարհեցուեն  
նրանք՝ ովքեր չարիք են նիւթում իմ դէմ:

<sup>5</sup> Թող լինեն նրանք ինչպէս փոշին քամու առջեւ,  
Տիրոջ հրեշտակը թող ցիրուցան անի նրանց.

<sup>6</sup> նրանց ճանապարհը թող խաւար եւ սահուն լինի,  
Տիրոջ հրեշտակը թող հետապնդի նրանց:

<sup>7</sup> Առանց պատճառի ցանց նետեցին իմ դէմ,  
առանց պատճառի փոս փորեցին իմ համար.

<sup>8</sup> չսպասուած մի ձախորդութիւն թող անակնկալի մատնի նրանց,  
թող բռնուեն այն ցանցի մէջ, որ լարել են,  
եւ ընկնեն այն փոսի մէջ, որ փորել են:

<sup>9</sup> Իսկ ես ցնծալու եմ Տիրոջ մէջ,  
ուրախանալու եմ Նրա պարգեւած փրկութեան համար.

<sup>10</sup> բոլոր ոսկորներս հռչակելու են.

«Տէր, ո՞վ է Քո նման,  
Դու ազատում ես աղքատին առաւել հզօրից,  
աղքատին ու խեղճին՝ բռնաւորից»:

D

<sup>11</sup> Ներկայանում են ամբարիշտ վկաներ,  
հարցնում են ինձ բաներ՝ որ անգիտանում եմ.

<sup>12</sup> բարոլթեան փոխարէն չարիք են հատուցում ինձ,  
կսկիծով են լցնում կեանքս:

<sup>13</sup> Ես, մինչդեռ, երբ նրանք հիւանդ էին,  
քուրճ հագած՝ ծոմապահութեան մէջ ուժասպառ էի լինում.  
Ներսումս կրկնում էի աղօթքը

<sup>14</sup> ինչպէս մի մտերիմի եւ եղբօր համար.  
տխուր ու վշտահար թափառում էի  
ինչպէս մէկը՝ որ ողբալով լալիս է իր մօր համար:

<sup>15</sup> Բայց անկմանս համար ուրախանում են եւ համախմբւում,  
յանկարծակի հարուածում են ինձ ու չարչարում.

<sup>16</sup> արհամարհում են ինձ եւ հեզնանքով ծաղրում,  
ատամները կրճտացնում են իմ դէմ:

<sup>17</sup> Մինչեւ ե՞րբ ես հեռուից դիտելու, Տէր.  
կեանքս ազատիր նրանց յարձակումներից,  
միակ կեանքս՝ մռնչացող առիւծներից:

<sup>18</sup> Երախտագիտութիւն կը մատուցեմ Քեզ մեծ հաւաքոյթում,  
կը գովեմ Քեզ մի բազմաթիւ ժողովրդի մէջ.

<sup>19</sup> Թող չկարողանան իմ վրայ ծիծաղել թշնամիներն ու դաւաճանները,  
եւ դադարեն աչքով նշան անել նրանք՝ ովքեր ինձ ատում են առանց պատճառի:

<sup>20</sup> Երբեք չունեն խաղաղութեան մի խօսք,  
զրպարտում են երկրի խաղաղասէրներին.

<sup>21</sup> նրանց բերանը բաց է իմ դէմ,  
ասելու համար. «Մենք ինքներս տեսանք»:

## D

<sup>22</sup> Տէր, Դու տեսար, մի՛ լռիր,  
Տէր իմ, հեռու մի՛ մնայ.

<sup>23</sup> արթնացիր, ոտքի կանգնիր դատիս համար,  
դատավարութեանս համար, Տէր Աստուած իմ:

<sup>24</sup> Տէր, դատիր ինձ ըստ Քո արդարութեան,  
Աստուած իմ, թող չուրախանան իմ դէմ.

<sup>25</sup> Թող չկարողանան մտածել. «Գոհ ենք»,  
թող չկարողանան ասել. «Յօշոտեցինք նրան»:

<sup>26</sup> Թող ամօթահար լինեն եւ շփոթութեան մատնուեն,  
նրանք՝ ովքեր վայելում են իմ տառապանքը.  
ամօթով ու արհամարհանքով ծածկուեն,  
նրանք՝ ովքեր պարծենում են իմ դէմ:

<sup>27</sup> Բոլոր նրանք՝ ովքեր արդարութիւն բաղձացին իմ համար,  
թող ցնծան ու երգեն ուրախութեամբ.  
միշտ կրկնեն. «Տէրը մեծ է,  
Նա կամենում է իր ծառայի խաղաղութիւնը».

<sup>28</sup> Լեզուս Քո արդարութիւնն է պատմելու,  
ամէն օր երգելու եմ Քո գովքը:



## ԱՂԱՌԱ 36 [35]

Մերում եւ ողորմութիւն

<sup>1</sup> Երգչախմբի ղեկավարի համար: Դաւթի՝ Տիրոջ ծառայի:

### 36ա

Մեղփի թելադրանքը

Կցորդ. Մեղփի վարչը մահ է,

մինչ Ասորոյ պարգեւը յաւիտենական կեանքի է Քրիստոս Յիսուս (Հում 6, 23):

Կամ. Եթէ աստուծոյ թէ անմեղէնք,

խաբոսեանք ինչն երա մեղէնք ճշմարտութիւնը մեղսումք չէ (1Թվ 1, 8):

Կամ. Ով չարքի է գործում, աստուծէ լոյսը,

իսկ ով գործում է ճշմարտութիւնը, Գալիս է պեղի լոյսը (Հմմտ. Թվ 3, 20-21):

<sup>2</sup> Մեղքը հրապուրիչ թելադրանք է

չարագործի սրտում.

Աստուծոյ երկիւղ չկայ

նրա աչքերի առաջ:

<sup>3</sup> Ինքն իրեն դիտում է կեղծաւոր աչքով,

չի գտնում, ո՛չ էլ ատում է իր մեղքը.

<sup>4</sup> նրա բերանի խօսքերը չարիք են ու խաբէութիւն,

կորցրել է բարութեան որեւէ զգացում:

<sup>5</sup> Իր անկողնում ծրագրում է անօրէն արարքներ,

յամառում է այլասերուած ճանապարհի մէջ,

չարիք գործելուց չի հրաժարուում:



### 36բ

Քո լոյսի մէջ մե՛նք տեսնում ենք լոյսը

Կցորդ. Ասորոյ Որդու մեջ է կեանքը, իսկ կեանքը մարդկանց լոյսն է (Հմմտ. Թվ 1, 4):

Կամ. Ես եմ աշխարհի լոյսը. ով հետեւում է ինձ, կ'ունենայ կեանքի լոյսը (Հմմտ. Թվ 8, 12):

Կամ. Մերան՝ ով շարասի է, ես յորիօրէն կը քամ կեանքի աղբիւրի ջրերը (Յյտ 21, 6):

Կամ. Քանի պետ ունէի լոյսը, հասարակէի լոյսին,

պառնալու համար լոյսի որդիներ (Թվ 18, 36):

Կամ. Հրեշտակն ինձ ցոյց տուց կենդանի ջրի մի գետ,

որ թիւսմ էր Ասորոյ եւ Գառնի գահից (Հմմտ. Յյտ 22, 1):

<sup>6</sup> Սէրդ տարածում է մինչեւ երկինք,

հաւատարմութիւնդ՝ մինչեւ ամպերը, Տէր.

<sup>7</sup> արդարութիւնդ նման է ամենաբարձր լեռներին,  
իրաւունքդ խոր անդունդ է.  
մարդուն եւ կենդանիներին Դու ես փրկում, Տէր:

<sup>8</sup> Ո՛վ Աստուած, քանիցս թանկարժէք է Քո սէրը,  
թեւերիդ հովանու ներքոյ են ապաւինում մարդիկ.

<sup>9</sup> յագենում են տանդ խնջոյքին,  
նրանց արբեցնում ես վայելքներիդ յորձանքով:

<sup>10</sup> Քեզնում է կեանքի աղբիւրը,  
Քո լոյսի մէջ մենք տեսնում ենք լոյսը.

<sup>11</sup> սէրդ պարգեւիր նրան՝ ով ճանաչում է Քեզ,  
արդարութիւնդ՝ սրտով ուղիղներին:

<sup>12</sup> Հպարտի ոտքը թող չհասնի ինձ,  
թող չսարսափեցնի ինձ չարագործի ձեռքը.

<sup>13</sup> ահա, անօրէնութիւն գործողներն ընկնում են,  
տապալուելով՝ ոտքի կանգնել այլեւս չեն կարող:



## ԱՊՂԱՌԱ 37 [36]

Հեգերը ժառանգելու են երկիրը

Կցորդ. Եկե՛ք, իմ Հօր օրհնեալներ,

ժառանգեցե՛ք ձեր Համար պարտասրտած արեւոյ-թիւնը (Մտթ 25, 34):

Կամ. Գանձեր մե՛զ պիտե՛ք երկրի վրայ, այլ՝ երկնիցում (Հմմտ. Մտթ 6, 19-20):

Կամ. Ձեր լոյսը թող փայլի մարդկանց առաջ,

որպէս լի փառաւոր են ձեր Հօրը, որ երկնիցում է (Հմմտ. Մտթ 5, 16):

<sup>1</sup> Գաւթի:

Մի՛ զայրացիր ամբարիշտներին տեսնելով,  
չարագործներին մի՛ նախանձիր.

<sup>2</sup> խոտի նման շուտով թառամում են,  
չորանում են դաշտի խոտի նման:

<sup>3</sup> Հաւատք ունեցիր Տիրոջ հանդէպ եւ բարիք գործիր,  
բնակուիր երկրում եւ հաւատարմութիւնը թող լինի քո սնունդը.

<sup>4</sup> Տիրոջ մէջ փնտռիր ուրախութիւնդ,  
կը կատարի սրտիդ փափաքները:

<sup>5</sup> Ընթացքդ կողմնորոշիր դէպի Տէրը,  
վստահիր նրան եւ նա կը գործի.

<sup>6</sup> արշալոյսի նման ծագել կը տայ արդարութիւնդ,  
կէսօրուայ նման փայլել կը տայ արդարութիւնդ:

<sup>7</sup> Լռութիւն պահպանիր Տիրոջ ներկայութեանը,  
եւ նրանում հաստատիր քո յոյսը.

մի՛ զայրացիր նրանց համար՝ ովքեր հասնում են յաջողութեան,  
մարդու համար՝ որ դիմում է խաբէութիւններին:

<sup>8</sup> Հրաժարուիր զայրոյթից, լքիր կատաղութիւնը,  
մի՛ բարկացիր. չարիք կը գործես.

<sup>9</sup> արմատախիլ է արուելու՝ ով գործում է չարիք,  
ժառանգելու է երկիրը նա՝ ով յուսացել է Տիրոջը:

<sup>10</sup> Եւս մի քիչ եւ չարագործն անհետանալու է,  
փնտուելու ես նրան եւ ահա՝ այլեւս չկայ.

<sup>11</sup> հեզերը ժառանգելու են երկիրը  
եւ վայելելու են անսահմանափակ խաղաղութիւն:

## D

<sup>12</sup> Չարագործը դաւեր է նիւթում արդարի դէմ,  
նրա դէմ կրճտացնում է ատամները.

<sup>13</sup> բայց Տէրը ծիծաղում է նրա վրայ,  
արդէն տեսնում է նրա օրուայ հասնելը:

<sup>14</sup> Չարագործները պատեանից հանում են սուրը եւ լարում աղեղը,  
գետին տապալելու համար աղքատին ու խեղճին,  
հարուածելու համար նրան՝ ով հետեւում է ուղիղ ճանապարհին.

<sup>15</sup> բայց նրանց սուրը մտնելու է իրենց իսկ սիրտը,  
նրանց աղեղները փշրուելու են:

<sup>16</sup> Աւելի լաւ է արդարի ունեցած քիչը,  
քան ամբարիշտների մեծ հարստութիւնը.

<sup>17</sup> որովհետեւ կոտորուելու են չարագործների բազուկները,  
բայց Տէրը թիկունք է կանգնում հաւատացեալներին:

<sup>18</sup> Տէրը ճանաչում է բարիների օրերը,  
որպէս պարգեւ ունենալու են յաւիտենական ժառանգութիւն.

<sup>19</sup> նեղութեան ժամանակ չեն ամաչի,  
կը յագենան քաղցի օրերին:

<sup>20</sup> Չարագործները, մինչդեռ, մահանալու են,  
որովհետեւ Տիրոջ թշնամիներն են.

վերջանալու են դաշտերի խոտի նման,  
ծխի նման բոլորը մէկ անհետանալու են:

<sup>21</sup> Չարագործը պարտք է վերցնում եւ չի վերադարձնում,  
բայց արդարը ողորմում է եւ բաժին հանում.

<sup>22</sup> օրհնեալները ժառանգելու են երկիրը,  
անիծեալները բնաջինջ են լինելու:

<sup>23</sup> Տէրն առաջնորդում է մարդու քայլերը,  
դարձնում է հաստատուն եւ սիրով հետեւում է նրա ընթացքին.

<sup>24</sup> եթէ ընկնում է, ընկած չի մնում,  
Տէրն իր ձեռքով բարձրացնում է նրան:

<sup>25</sup> Երիտասարդ էի ես, իսկ այժմ՝ տարեց,  
հաւատացեալներից մէկին երբեք չեմ տեսել լքուած,  
ո՛չ էլ նրա որդիներին՝ հաց մուրալիս.

<sup>26</sup> Իր ունեցածից ամէն օր սիրով բաժին է հանում,  
այս իսկ պատճառով՝ նրա սերունդը օրհնուած է:

## D

<sup>27</sup> Հեռացիր չարից եւ գործիր բարին,  
բնակութեան օթեւան կ'ունենաս միշտ.

<sup>28</sup> որովհետեւ Տէրը սիրում է արդարութիւնը,  
երբեք չի լքում իր մտերիմներին:

Նրանք պաշտպանութիւն են ունենալու յաւիտեան,  
մինչ չարագործների սերունդը անհետանալու է.

<sup>29</sup> հաւատացեալները ժառանգելու են երկիրը  
եւ նրանում բնակուելու են ընդմիշտ:

<sup>30</sup> Արդարի բերանը խօսում է իմաստութիւն,  
նրա լեզուն հռչակում է արդարութիւնը.

<sup>31</sup> սրտում ունի իր Աստծոյ օրէնքը,  
իր քայլերը երբեք չեն սասանուելու:

<sup>32</sup> Չարագործը դարանակալում է արդարին  
եւ ցանկանում է նրան մահ հասցնել.

<sup>33</sup> բայց Տէրն արդարին չի թողնում նրա ձեռքում,  
ատեանում չի թոյլատրում արդարի դատապարտութիւնը:

<sup>34</sup> Յոյսդ Տիրոջ մէջ հաստատիր  
եւ պահպանիր Նրա ճանապարհը.  
Կը հասցնի քեզ երկրին տիրելուն  
եւ դու կը տեսնես չարագործների արմատախիլ լինելը:

<sup>35</sup> Տեսայ՝ թէ ինչպէս էր ամբարիշտը յաղթանակում,  
ինչպէս էր բարձրանում փարթամ ծառի նման.

<sup>36</sup> կրկին անցայ մօտով եւ ահա՝ այլեւս չկար,  
փնտռեցի եւ այլեւս չգտայ նրան:

<sup>37</sup> Դիտիր ամբիծին, զննիր հաւատացեալին,  
խաղաղութեան մարդուն է պատկանում ապագան.

<sup>38</sup> բայց մեղաւորները բոլորն էլ ոչնչացուելու են,  
չարագործներին ապագան մերժուած է:

<sup>39</sup> Տիրոջից է գալիս հաւատացեալների փրկութիւնը,  
նրանց պաշտպանութիւնը՝ տրտմութեան ժամանակ.

<sup>40</sup> Տէրն օգնում է նրանց, ազատում չարագործներից եւ փրկում նրանց,  
որովհետեւ Նրանում են փնտռում իրենց պաշտպանութիւնը:



Կցորդ.Նրան, որ մեղէ չէր ճանաչում,  
 Եստե՛նք մեղէ՛ր պարճրեց մեր Համար (Հմմտ. 2Կր 5, 21):  
 Կամ. Երբ Տէր՞ը կողմից պարտում ե՛նք, զգո՛ւշացո՛ւմ ե՛նք,  
 որպէ՛ս չի չտարասպարհո՛ւենք (Հմմտ. 1Կր 11, 32):

<sup>1</sup> Մաղմոս: Գալթի: Յիշատակելու համար:

<sup>2</sup> Տէր, զայրոյթով մի՛ յանդիմանիր ինձ,  
 մի՛ ուղղիր ինձ բարկութեամբդ.

<sup>3</sup> Կետերդ հարուածեցին ինձ  
 եւ ձեռքդ ծանրանում է իմ վրայ.

<sup>4</sup> Բարկութեանդ պատճառով՝ առողջ անդամ չի մնացել մարմնումս,  
 մեղքիս պատճառով՝ ոսկորներիցս ոչ մէկն անեղծ է:

<sup>5</sup> Յանցանքներս գլխիս են թափւում,  
 ուժերիցս գերազանց ծանրութիւն են.

<sup>6</sup> Բորբոքուած ու թարախակալուած են վէրքերս,  
 ահա թէ ինչպէս եմ վճարում յիմարութիւնս:

<sup>7</sup> Ծայր աստիճան ճնշուած ու կքուած,  
 մթազնած թափառում եմ ամբողջ օրը.

<sup>8</sup> մինչեւ ոսկրածոծոս այրում է ջերմս,  
 մարմնումս առողջ անդամ այլեւս չի մնացել:

<sup>9</sup> Ծայր աստիճան նուաղած ու տկարացած,  
 սրտիս դողի պատճառով հառաչում եմ.

<sup>10</sup> Իւրաքանչիւր իմ փափաք Քո առջեւ է,  
 իմ հեծեծանքը Քեզ անյայտ չէ:

<sup>11</sup> Սիրտս բաբախում է եւ ուժերս լքում են ինձ,  
 նուազում է աչքերիս լոյսը.

<sup>12</sup> մտերիմներս ու ընկերներս հեռու են մնում,  
 մերձակորներս՝ վէրքերիցս հեռու:

<sup>13</sup> Որողայթներ են լարում եւ փորձում են վնաս հասցնել կեանքիս  
 նրանք՝ ովքեր կամենում են իմ կործանումը.  
 Հարկութեամբ լի խօսքեր են արտասանում  
 եւ ամբողջ օրը խաբէութիւն մտածում:

<sup>14</sup> Բայց ես, ինչպէս մի խուլ, չեմ լսում,  
 ինչպէս մի համր, չեմ բացում բերանս.

<sup>15</sup> այո՛, ինչպէս մի մարդ՝ որ չի լսում  
 եւ նրա բերանը պատասխանելու անկարող է:

<sup>16</sup> Քեզ եմ ես յուսացել, Տէր,  
 կը պատասխանես ինձ, Տէր Աստուած իմ.

<sup>17</sup> ասում եմ. «Թող չուրախանան իմ դէմ,  
 թող չբարձրանան, եթէ ոտքս սասանուի»:

<sup>18</sup> Բայց այժմ ես ընկնելու վրայ եմ  
եւ իմ ցաւը ինձ միշտ ներկայ է.

<sup>19</sup> ահա, ես խոստովանում եմ իմ յանցանքը,  
սարսափում եմ մեղքիս պատճառով:

<sup>20</sup> Թշնամիներս հզօր են ու կորովի,  
բազմաթիւ են, որ հակառակում են ինձ խաբէութիւններով.

<sup>21</sup> Բարիքի փոխարէն՝ չարիք են հատուցում ինձ,  
մեղադրում են ինձ, եթէ հետապնդում եմ բարին:

<sup>22</sup> Տէր, մի՛ լքիր ինձ,  
հեռու մի՛ մնայ ինձնից, Աստուած իմ.

<sup>23</sup> շուտով օգնութեան հասիր ինձ,  
Դու, Տէր, փրկութիւն իմ:



## ԱՊՂԱՌՈՒ 39 [38]

Օտարական եմ

Կցորդ. Հաւատքի մէջ մահացան մեր հայրերը,

դաւանելով՝ որ օրարական են եւ պանդոխոյ (Հմմտ. Եբր 11, 13):

Կամ. Այս Գիշեր իսկ կեանքդ պահանջուեալ է լեզնից.

ինչպիսի՞նք է արդեօք ի՞նչ կեանքը (Հմմտ. Ղկս 12, 20; Յկբ 4, 14):

<sup>1</sup> Երգչախմբի ղեկավարի համար: Իդիթուինի: Ապղմոս: Գալթի:

<sup>2</sup> Ասացի. «Կը հսկեմ ճանապարհներիս վրայ,  
որպէսզի լեզուով չմեղանչեմ.

պահապան կը դնեմ բերանիս վրայ,  
մինչ չարագործը կանգնած է իմ առջեւ»:

<sup>3</sup> Ահա, մնացի համը, լռութեան մէջ,  
լռում էի, բայց ոչնչի չէր ծառայում,  
աւելի էր սաստկանում տառապանքս.

<sup>4</sup> կրճքիս ներսում սիրտս այրում էր,  
կրկին մտածելիս՝ այրում էր է՛լ աւելի,  
մինչեւ որ լեզուիս թոյլատրեցի խօսել.

<sup>5</sup> «Յայտնիր ինձ, Տէր, իմ վախճանը  
եւ թէ ինչ է թիւն իմ օրերի,  
որպէսզի հասկանամ՝ թէ որքան դիւրաբեկ եմ:

<sup>6</sup> Մէկ ափ չափով օրեր տուեցիր ինձ,  
տեւողութիւնս ոչինչ է Քո առաջ.

մարդու տեւողութիւնը մէկ շունչ է,

<sup>7</sup> գնում ու գալիս է ստուերի նման.

խռովում է ոչնչի համար, քամու նման,  
գանձում է, բայց չգիտէ՝ թէ ով է հաւաքելու»:

<sup>8</sup> Ուրեմն, Տէր, ինչի՞ եմ սպասում,  
իմ յոյսը միմիայն Քեզնում է.  
<sup>9</sup> ազատիր ինձ իմ բոլոր մեղքերից,  
յիմարի նախատինքների տակ մի՛ թող ինձ:

<sup>10</sup> Վերադառնում եմ լռութեան մէջ եւ չեմ բացում բերանս,  
որովհետեւ Դու ինքդ ես գործում.

<sup>11</sup> Հեռացրու ինձնից Քո հարուածները,  
կքւում եմ փշրող ձեռքիդ ներքոյ:

<sup>12</sup> Դու կրկին ոտքի ես կանգնեցնում մարդուն,  
ուղղելով նրա մեղքը,  
սարդոստայնի նման մաքրում ես նրա կրքերը.  
մարդն ուրիշ բան չէ, եթէ ոչ՝ մի շունչ:

<sup>13</sup> Լսիր իմ աղօթքը, Տէր,  
ապանջ դիր իմ աղաղակին,  
խուլ մի՛ եղիր լացիս ճայնին:

Քո առաջ մի օտարական եմ միայն,  
թափառական՝ ինչպէս իմ բոլոր հայրերը.

<sup>14</sup> Հեռացրու հայեացքդ, որպէսզի շունչ քաշեմ,  
նախ՝ քան կը գնամ այստեղից եւ չեմ լինի այլեւս:



## ՍԱՂՄՈՒ 40 [39]

Ահա գալիս եմ

**Կցորդ.** Եւ շեւարճ մտնելով, Քրիստոս ասում է. «Ո՛չ զո՞ւ համեցար, ո՛չ ընժաններ.  
աւա ես գալիս եմ, ո՛վ Եսորոսած, կարարելո՞ւ Քո համէլ» (Հմմտ. եբր 10, 5.7):

**Կամ.** Երկնից իջել էմ կարարելո՞ւ ո՛չ թէ իմ համէլ,  
այլ համէլ Երս՝ ո՞վ առաւել է ինձ (Յվհ 6, 38):

**Կամ.** Որպէ՞ս զո՞ւ մարոցէ՞ յեր մարմնները.  
աս՛ է յեր հոգեօր պաշտամունէլը (Հմմտ. Հռմ 12, 1):

<sup>1</sup> Երգչախմբի ղեկավարի համար: Գալթի: Սաղմոս:

<sup>2</sup> Ես յուսացի Տիրոջը  
ընդդէմ ամէն տեսակ յոյսի.  
եւ նա խոնարհուեց իմ վրայ,  
լսեց իմ աղաղակը:

<sup>3</sup> Դուրս հանեց ինձ մահուան փոսից,  
ցեխոտ ճահճուտից.  
ոտքերս ժայռի վրայ բարձրացրեց,  
հաստատուն դարձրեց իմ քայլերը:

<sup>4</sup> Բերանումս մի նոր երգ դրեց,  
գովասանք՝ մեր Աստծուն.

չատերը, որ տեսնում են, երկնչեղու են  
եւ հաւատալու են Տիրոջը:

<sup>5</sup> Երանելի է այն մարդը,  
որ Տիրոջ մէջ է հաստատել իր հաւատքը.  
նա՛ որ չի դիմում հպարտներին,  
կեղծիքի մէջ կորածներին:

<sup>6</sup> Քանի՛ հրաշագործութիւններ կատարեցիր մեր համար,  
Տէր Աստուած իմ.  
քանի՛ ծրագրեր՝ ի նպաստ մեր,  
ոչ ոք է Քեզ նման.  
ուզում եմ աւետարանեմ դրանք ու հռչակեմ,  
չափազանց շատ են՝ պատմելու համար:

## D

<sup>7</sup> Ո՛չ գոհ կամեցար, ո՛չ ընծայ,  
իմ ականջները բացեցիր.  
ո՛չ ողջակէզ պահանջեցիր, ո՛չ քաւութեան գոհ,  
<sup>8</sup> յայնժամ ես ասացի. «Ահա գալիս եմ»:

Գրքում իմ մասին գրուած է  
<sup>9</sup> այն՝ ինչ կամենում ես՝ որ անեմ.  
Աստուած իմ, սա՛ է այն՝ ինչ սիրում եմ,  
Քո օրէնքը իմ սրտի խորքում է:

<sup>10</sup> Ես աւետարանում եմ Քո արդարութիւնը  
մեծ հաւաքոյթում.  
տեսնում ես, շրթունքներս փակ չեմ պահում,  
Տէր, Դու գիտես դա:

<sup>11</sup> Ծածուկ չեմ պահում Քո արդարութիւնը  
սրտիս խորքում.  
այո՛, ես հռչակում եմ Քո հաւատարմութիւնը  
եւ Քո պարգեւած փրկութիւնը.  
չեմ թաքցնում Քո սէրն ու Քո ճշմարտութիւնը  
մեծ հաւաքոյթի առաջ:

<sup>12</sup> Ինձնից մի՛ հեռացրու ողորմութիւններդ, Տէր,  
Քո սէրը եւ Քո ճշմարտութիւնը  
թող միշտ պահպանեն ինձ:

## D

<sup>13</sup> Բազմաթիւ չարիքներ են թափուում վրաս,  
ճգնում են ինձ իմ մեղքերը.  
դրանք չեմ հաշուում, աւելի են՝ քան մազերս,  
սիրտս նուաղում է ինձնում:

<sup>14</sup> Կամեցի՛ր, Տէր, ազատել ինձ,  
չտապիր ինձ օգնութեան.

<sup>15</sup> Թող միասին ամաչեն ու սարսափեն  
բոլոր նրանք՝ ովքեր կեանքիս դէմ դաւեր են նիւթում:

Թող յետ նահանջեն ամօթով ծածկուած,  
ովքեր չարիք են ինձ կամենում:

<sup>16</sup> Իրենց ամօթի ներքոյ ճգմուեն,  
ովքեր ինձ ասում են. «Սա է քեզ հասնում»:

<sup>17</sup> Թող Քեզնում ուրախանան ու ցնծան,  
ովքեր փնտռում են Քեզ.  
միշտ ասեն. «Մեծ է Տէրը»,  
ովքեր սիրում են պարգեւածդ փրկութիւնը:

<sup>18</sup> Ես աղքատ եմ, արհամարհուած մէկը,  
բայց Տէրը մտածում է իմ մասին.  
Դու ես իմ օգնութիւնն ու իմ ազատարարը,  
Աստուած իմ, մի՛ ուշացիր:



## ՍԱՂԱՌՈՒ 41 [40]

Օրհնեալ է Տէրը, Աստուածն Իսրայէլի

Կցորդ. Մեր վրայ սրբաբանութիւնով մահուան սրբաբանութիւնը,  
որպէս չի սովորեմք չվարակել ինչն էր սեպ (2Կր 1, 9):

Կամ. Տէր, նա՛ որ ու՛մ սիրո՛ւմ ես, Հիւանդ է:

Յիսուս ասաց. Այս Հիւանդութիւնը Աստուծոյ փառքի համար է (Հմմտ. Յվհ 11, 3-4):

Կամ. Ճշմարիտ եմ ասում յեզ, որ յեզնից մէկը մարմնելու է ինձ,  
նա՛ որ ու՛մ սիրո՛ւմ է ինձ Հեղ (Մրկ 14, 18):

Կամ. Երանի՛ր ողորմա՞նքներն, որովհետեւ նրանով ողորմութիւն կը գրենեն (Մտթ 5, 7):

<sup>1</sup> Երգչախմբի ղեկավարի համար: Սաղմոս: Դաւթի:

<sup>2</sup> Երանելի է մարդը՝ որ հոգատարութիւն ունի տկարի նկատմամբ,  
չար օրերում Տէրն ազատում է նրան.

<sup>3</sup> Տէրը պաշտպանում է նրան, երանութեամբ ապրեցնում երկրի վրայ,  
նրան չի մատնում իր թշնամիների ցանկութեանը.

<sup>4</sup> Տէրն օգնում է նրան իր տառապանքի անկողնում,  
հիւանդութիւնները հեռացնում է անկողնուց, որի մէջ սպառւում էր:

<sup>5</sup> Ես ասում եմ. «Ողորմիր ինձ, Տէր,  
բժշկիր ինձ, որովհետեւ մեղանչեցի Քո դէմ».

<sup>6</sup> Թշնամիներս չարիք են խօսում իմ դէմ.

«Ե՞րբ է մեռնելու եւ ե՞րբ է անհետանալու իր անունը»:

<sup>7</sup> Ով գալիս է ինձ այցելելու, կեղծ խօսքեր է արտասանում,  
չարութիւն է հաւաքում իր սրտում  
եւ, երբ դուրս է գալիս, չարախօսում է հրապարակներում:

<sup>8</sup> Իմ դէմ դաշնակցած, թշնամիներս բամբասում են,  
իմ դէմ թուարկում են փորձանքներս.

<sup>9</sup>«Ծանր, սատանայական հիւանդութիւն է ընկել վրան, անշուշտ չի կարող կրկին ոտքի կանգնել անկողնուց, ուր պառկած է»:

<sup>10</sup> Իմ խաղաղութեան մարդը նոյնպէս, ում վստահում էի, նաեւ նա, որ իմ հետ ուտում էր միեւնոյն հացը, այժմ իմ դէմ բարձրացնում է իր կրունկը:

<sup>11</sup> Բայց Դու, Տէր, ողորմիր ինձ, ոտքի կանգնեցրու ինձ, որպէսզի կարողանամ հատուցել նրանց.

<sup>12</sup> սրանից կ'իմանամ, որ սիրում ես ինձ, եթէ թշնամիս իմ վրայ յաղթանակ չերգի.

<sup>13</sup> Դու կը հաստատես իմ անմեղութիւնը, ընդմիջտ կը կանգնեցնես ինձ Քո դէմքի առաջ:

<sup>14</sup> Օրհնեալ է Տէրը, Աստուածն Իսրայէլի, ի յաւիտենից եւ ի յաւիտեանս: Ամէն: Ամէն:



Վերջ Սաղմոսների Առաջին Գրքի



ՍԱԴՄՈՍ 42 [41]

Հոգիս ծարաւի է Աստծուն

Կցորդ-Քանի գետն ապրում են՜ այս մարմնում, ախորի մեջ են՜, Տերօջից Ընտան (2Կր 5, 6):  
կամ. Ով ծարաւ է, թող Գայ իմ մօտ եւ իմին:

Կենդանի ջրերի Գետեր կը թխեն նրանում (Հմմտ. Յվհ 7, 37-38):

կամ. Ով ծարաւ է, թող Գայ, յրեօրեն վերցնի կենան՜ի ջրերը (Հմմտ. Յյտ 22, 17):

կամ. Մեն՜ ընթանում են՜ Ըստար՜ի մեջ, եւ ո՛չ րակաւին՝ րեսոթեան (Հմմտ. 2Կր 5, 7):

կամ. Մե՛ վախեցե՜լ եւ մե՛ խոռվո՜ւե՜լ,  
այլ ուրեացրե՜լ Տերօջը՝ Քրիստոսին յեր սրտերում (Հմմտ. 1Պտ 3, 14-15):

<sup>1</sup> Երգչախմբի ղեկավարի համար: Մասփիլ: Կորիւի որդիների:

<sup>2</sup> Ինչպէս եղջերուն փափաքում է ջրի վտակներին, այնպէս էլ հոգիս փափաքում է Քեզ, ո՛վ Աստուած:

<sup>3</sup> Հոգիս ծարաւի է Աստծուն, կենդանի Աստծուն, ե՞րբ եմ գալու՜ տեսնելու Աստծոյ դէմքը:

<sup>4</sup> Օր ու գիշեր ուրիշ հաց չունեմ, արցունքներից բացի, մինչ ամբողջ օրն ինձ ասում են, թէ.  
«Ո՛ւր է քո Աստուածը»:

<sup>5</sup> Մտաբերում եմ անցեալ ժամանակները, յուզուելու աստիճան. երբ դռներից ներս էի մտնում մինչեւ Աստծոյ տունը, տօնակատար ամբոխի ուրախ երգերով եւ շնորհակալութեան տաղերով շրջապատուած:

<sup>6</sup> Ինչո՞ւ ես տխուր, հոգի իմ, ինչո՞ւ ես խռովուած.  
յուսա՛ Աստծուն, դեռ կը կարողանամ օրհնել Նրան.  
Աստծոյ դէմքը փրկուեթիւն է:

## D

<sup>7</sup> Հոգիս ինձնում խռովուած է եւ յիշում եմ Քեզ,  
Յորդանանի երկրից ու Հերմոնից,  
Իմ խոնարհ փոքրիկ բլրակից:

<sup>8</sup> Անդունդը կանչում է անդունդին,  
Ջրվէժները շառաչով.  
Բոլոր յորձանքներդ ու ալիքներդ  
խուժում ողողում են անձս:

<sup>9</sup> Տէրը պարգեւում է ինձ Իր սէրը  
օրուայ ընթացքում.  
Գիշերը աղօթքս երգում է Նրան,  
Իմ կեանքի Աստուածն է:

<sup>10</sup> Ասում եմ Աստծուն. «Վէ՛մ իմ,  
ինչո՞ւ ես ինձ մոռանում,  
ինչո՞ւ եմ տրտում քայլում  
թշնամուց չարչարուած»:

<sup>11</sup> Մահացու վիրաւոր եմ մինչեւ ոսկորներս,  
հակառակորդներս նախատում են ինձ,  
մինչ ամբողջ օրն ինձ ասում են, թէ.  
«Ո՞ւր է քո Աստուածը»:

<sup>12</sup> Ինչո՞ւ ես տխուր, հոգի իմ, ինչո՞ւ ես խռովուած.  
յուսա՛ Աստծուն, դեռ կը կարողանամ օրհնել Նրան.  
Աստծոյ դէմքը փրկուեթիւն է:



## ԱՊՂԱՌՈՒ 43 [42]

Առաքիլ լոյսդ ու ճշմարտութիւնդ

Կցորդ. Բապտիստական ժողովուրդի միջոցով Է. Կարկաստ անցնել՝

Աստծոյ արեւոյն-թիւն մտնելու Ըսմար (Հմմտ. Գրծ 14, 22):

Կամ. Որպէ՛ս լոյս եմ եկել աշխարհ,

որպէ՛ս յիշուի Ըսմարայ ինչ՝ խաւարի մէջ շմեայ (Հմմտ. Յվհ 12, 46):

<sup>1</sup> Դատիր ինձ, ո՛վ Աստուած, պաշտպանիր դատս  
ընդդէմ անհաւատ ժողովրդի.  
Խաբեբայ մարդուց ազատիր ինձ,  
նրանից՝ ով դաւաճանում է:

<sup>2</sup> Դու ես, ո՛վ Աստուած, իմ ապաւէնը,  
ինչո՞ւ ես մերժում ինձ.

ինչն՞ և եմ տրտում քայլում  
թշնամուց չարչարուած:

<sup>3</sup> Առաքիւր Քո լոյսն ու ճշմարտութիւնը,  
նրանք թող առաջնորդեն ինձ.  
Կ'առաջնորդեն ինձ դէպի Սրբութեանդ լեռը,  
դէպի Քո օթեւանները:

<sup>4</sup> Եւ կը դամ Աստուծոյ խորանի առաջ,  
իմ ուրախութեան Աստուծոյ դիմաց.  
Քո համար կ'երգեմ իմ տաւիղով,  
ո՛վ Աստուած, Աստուած իմ:

<sup>5</sup> Ինչն՞ և ես տխուր, հոգի իմ, ինչն՞ և ես խռովուած.  
յուսա՛ Աստուծոն, դեռ կը կարողանամ օրհնել Նրան.  
Աստուծոյ դէմքը փրկութիւն է:



## ԱՊՂԱՌՈՒ 44 [43]

Յոյսս գեւգեւի վրայ չէ

Կցորդ. Բ՛ողոր փորձո՛ւթի-ննէրո՛ւմ առաւելե՛լան յաղթահան ենե՛վ,  
շնորհի-՛ Սրա՛ն որ ո՛րեց մեզ (Հմմտ. Հռմ 8, 37):

Կամ. Երանի՛ յեզ, եթէ արաւայո՛ւմ է՛վ արդարո՛ւթեան Համար.  
մե՛զ վախեցե՛վ ե- մե՛ խո՛ւզու-ե՛վ (Հմմտ. 1 Պտ 3, 14):

Կամ. Բ՛ողորի կողմից արո՛ւթու- է՛վ իմ Անուան պարճառով,  
Բայց յետ Գլխի մաշեցից մեկն անգամ չի կորչելու- (Ղկս 21, 17-18):

Կամ. Մաճուան ենթարկու-եցի՛վ ընդմեջ Քրիստոսի մարմնի,  
պարհանելու- Համար Սրան՝ որ յարո՛ւթի-ն է առել մեռելներից (Հմմտ. Հռմ 7, 4):

<sup>1</sup> Երգչախմբի ղեկավարի համար: Կորիսի որդիների: Մասիլ:

<sup>2</sup> Ո՛վ Աստուած, մեր աղանջները լսեցին,  
մեր հայրերը պատմեցին մեզ  
գործերը, որ Դու կատարեցիր  
նրանց օրոք, հին ժամանակներում:

<sup>3</sup> Քո ձեռքով գահընկէց արեցիր հեթանոսներին,  
եւ նրանք կարողացան բնակուել այնտեղ.  
Ետ մղեցիր բազմաթիւ ժողովուրդներ,  
եւ նրանք կարողացան տարածուել:

<sup>4</sup> Նրանց սուրը չէ՛ որ գրաւեց երկիրը,  
նրանց բազուկը չէ՛ որ փրկեց նրանց.  
այլ Դու ինքդ էիր, Քո բազկով ու Քո աջով,  
Քո դէմքի լոյսով, որովհետեւ սիրում էիր նրանց:

<sup>5</sup> Դու ես իմ Թագաւորը, ո՛վ Աստուած,  
Դու վճռում ես Յակոբի փրկութիւնը.

<sup>6</sup> Քո հետ կը յաղթենք հակառակորդներին,  
Քո Անունով կը ջախջախենք յարձակուողներին:

<sup>7</sup> Զէնքերին չէ՛ որ յուսացել եմ,  
սուրս չի կարող ինձ փրկութիւն պարգեւել.  
<sup>8</sup> միայն Դու կը փրկես մեզ մեր հարստահարիչներից  
եւ ամօթով կը պատես մեր թշնամիներին.  
<sup>9</sup> ամէն ժամանակ Աստուած մեր օրհնութիւնն է,  
անդադար փառաբանում ենք Քո Անունը:

## D

<sup>10</sup> Բայց այժմ մերժում ես մեզ ու խոնարհեցնում,  
ճակատամարտի դուրս չես գալիս մեր զօրքերի հետ.  
<sup>11</sup> փախստական ես դարձնում մեզ հակառակորդի առջեւ,  
մեր ունեցուածքներն յափշտակում են մեր թշնամիները:  
<sup>12</sup> Պառների նման մեզ յանձնում ես սպանդի,  
ցրում ես մեզ հեթանոսների մէջ.  
<sup>13</sup> Դու ոչինչ գնով վաճառում ես Քո ժողովուրդը,  
այդպիսի գնով Դու ոչինչ չես շահում:  
<sup>14</sup> Մեզ ենթարկում ես մեր հարեւանների ծաղրանքին,  
սահմանակիցների հեզանքին ու նախատինքին.  
<sup>15</sup> առակ ես դարձնում մեզ հեթանոսների համար,  
օտարականները թափ են տալիս գլուխները:  
<sup>16</sup> Ամբողջ օրն առջեւս նախատինք է,  
ամօթը ծածկում է երեսս,  
<sup>17</sup> լսելով նրան՝ ով նախատում ու հայհոյում է,  
տեսնելով թշնամուն, որ վրէժխնդիր է լինում:

## D

<sup>18</sup> Այս ամէնը թափուեց մեր վրայ,  
բայց մենք Քեզ չէինք մոռացել,  
Քո Ուխտը մենք չէինք խախտել:  
<sup>19</sup> Մեր սիրտը ետ չէր դարձել,  
մեր քայլերը չէին շեղուել Քո արահետներից.  
<sup>20</sup> Բայց այժմ Դու նետում ես մեզ բորենիների մէջ,  
մահուան ստուերով ծածկում ես մեզ:  
<sup>21</sup> Եթէ մոռացած լինէինք մեր Աստծոյ Անունը,  
եթէ մեր ձեռքերը ուղղած լինէինք մի օտար աստծոյ.  
<sup>22</sup> մի՞թէ Աստուած չէր բացայայտի դա,  
Նա՛ որ ճանաչում է սրտի գաղտնիքները.  
<sup>23</sup> Բայց Քո համար է, որ սպանւում ենք ամէն օր,  
սպանդի սահմանուած գառներ են համարում մեզ:  
<sup>24</sup> Արթնացիր, Տէր, ինչո՞ւ ես ննջում,  
ոտքի կանգնիր, մի՛ մերժիր մեզ ընդմիշտ.  
<sup>25</sup> Ինչո՞ւ ես թաքցնում Քո դէմքը,  
մոռանում մեզ, որ խոնարհեցուած ենք ու հարստահարուած:

<sup>26</sup> Ընկել ենք գետին, բերաններս լցուել են փոշով,  
մեր որովայնը կցուել է հողին.

<sup>27</sup> ոտքի կանգնիր, հասիր մեզ օգնութեան,  
ազատիր մեզ յանուն Քո սիրոյ:



## ԱՊՂԱՌՈՒ 45 [44]

Աստուած, Քո Աստուածը օծեց Քեզ

Կցորդ.Իսկ Որդուն ասում է.

«Քո արեւը, ո՛վ Աստուած, յաւերեանս յաւերեանից է» (Եբր 1, 8):

Կամ. Այս խորհուրդը մեծ է

եւ ղերաբերում է Քրիստոսին ու Եկեղեցուն (Հմմտ. Եփս 5, 32):

Կամ. Մշանեցի յեղմէկ մեակ փեռայի,

ներկայացնելու՝ Համար յեղ Քրիստոսին որպէս անարատ կոյսեր (2Կր 11, 2):

Կամ. Ահա, Հասել է Գառան Հարսանիքի օրը.

Մրա Հարսը պարտաստ է, փառահեղ զգեստներ Հագած (Հմմտ. Յյտ 19, 7-8):

Կամ. Քրիստոս սիրեց Եկեղեցուն եւ նրա Համար նոյնրեց Իր Անշը,

որպէս չի Իր անշեւ կանգնեցնի ամբողջ ողջն փառելով պարտած (Հմմտ. Եփս 5, 25.27):

<sup>1</sup> Երգչախմբի ղեկավարի համար: «Շուշաններ»ի վրայ: Կորիսի որդիների:  
Մասիլ: Սիրոյ երգ:

<sup>2</sup> Սրտիցս բխում են գեղեցկութեան խօսքեր,  
Մեսիա Թագաւորի առաջ երգում եմ իմ բանաստեղծութիւնը.  
Լեզուս նման է արագ գրագրի գրչին:

<sup>3</sup> «Մարդկանց որդիների մէջ ամենագեղեցիկն ես Դու,  
Քո շրթունքներից հեղուում է շնորհ,  
որովհետեւ Աստուած յաւիտեան օրհնեց Քեզ:

<sup>4</sup> Ո՛վ հզօր, գօտեպնդուիր սրով,  
փառքով ու վայելչութեամբ յառաջացիր ու յաղթանակիր,

<sup>5</sup> նժոյգիդ հեծիր՝ ճշմարտութեան, հեղութեան ու արդարութեան համար:

Քո աջը սովորեցնի քեզ հրաշալի գործեր,

<sup>6</sup> Քո առաջ, նետերիդ հարուածներով, ընկնեն հեթանոսները,  
Մեսիա Թագաւորի թշնամիները, սրտից խոցուած:

<sup>7</sup> Քո գահը, ո՛վ Աստուած, տեւում է ընդմիշտ, յաւիտեան,  
արքայութեանդ գաւազանը արդարութեան գաւազան է,

<sup>8</sup> Դու սիրում ես արդարութիւնը եւ ատում՝ անօրէնութիւնը:

Այս իսկ պատճառով օծեց քեզ, Աստուած, Քո Աստուածը,  
բերկրանքի օծմամբ նախընտրեց Քեզ Քո ընկերներից,

<sup>9</sup> զգեատներդ ամբողջ միւռոն, ալոհ ու կասիայ են բուրում:

Փղոսկրեայ պալատներում ուրախացնում են Քեզ համերգները,

<sup>10</sup> նախասիրեալներիդ մէջ կան թագաւորների դստերը.

Քո աջին կանգնած է Կինը, Օֆիրի ոսկիներով զարդարուած»:

<sup>11</sup> «Լսիր, ո՛վ դուստր, նայիր եւ ականջ դիր.  
մոռացիր քո ժողովուրդը եւ քո հօր տունը,  
<sup>12</sup> որովհետեւ Մեսիա Թագաւորը ցանկացել է քո գեղեցկութիւնը:

Նա է քո Տէրը, ո՛վ դուստր Տիւրոսի,  
<sup>13</sup> երկրպագիր նրան եւ ժողովրդի մեծամեծները  
ընծաներով կը խնդրեն քո ժպիտը»:

<sup>14</sup> Ահա, Թագաւորի դուստրը մտնում է իր փառքի մէջ,  
ոսկեհիւս կտաւներով հանդերձաւորուած.  
<sup>15</sup> այլեւս պատրաստ՝ առաջնորդոււմ է Մեսիա Թագաւորի առաջ:

Իր կոյս ընկերուհիները իր ետեւից շքախումբ են կազմում,  
<sup>16</sup> երգով եւ ուրախութեամբ ընկերանում են նրան մինչեւ Քո մօտ,  
տօնակատարութեամբ մտնում են արքայական յարկից ներս:

<sup>17</sup> «Հայրերիդ փոխարէն կը լինեն քեզ որդիներ,  
նրանց իշխաններ կը կարգես ամբողջ երկրի վրայ.  
<sup>18</sup> սերնդէ սերունդ յիշել կը տամ անունդ,  
ժողովուրդներն յաւիտեանս յաւիտենից օրհնելու են քեզ»:



## ՍԱՂԱՌԱ 46 [45]

Տէրը միշտ մեր հետ է

Կցորդ.Քրիստոս Յիսուս մեր խաղաղութիւնն է,  
Նա՝ որ երկուսին միայն մէկ դարձրեց (հմմտ. Եփս 2, 14):  
կամ. Ահա ես յեր Ըեդ եմ ամէն օր, մինչեւ աշխարհի վախճանը (Մտթ 28, 20):

<sup>1</sup> Երգչախմբի ղեկավարի համար: Կորիսի որդիների:  
«Ալամօթ»ի վրայ: Երգ:

<sup>2</sup> Աստուած մեր համար ապաւէն է եւ ուժ,  
տրտմութեան ժամանակ միշտ մօտիկ օգնութիւն.  
<sup>3</sup> այս իսկ պատճառով, չենք վախենում՝ եթէ երկիրը խռովոււմ է,  
եթէ լեռները փլուզոււմ են մինչեւ ծովի անդունդները.  
<sup>4</sup> եթէ նոյնիսկ նրա ջրերը ուռչում են ու յորդում,  
եթէ փոթորկի ժամանակ դողում են լեռները:

[Տիեզերքի Տէրը միշտ մեր հետ է,  
մեր ապաւէնն է Յակոբի Աստուածը:]

<sup>5</sup> Մի գետ իր վտակներով ուրախացնում է Աստուծոյ քաղաքը,  
Բարձրեալի բնակուած օթեւաններից ամենասուրբը.  
<sup>6</sup> Աստուած նրանում է, չի կարող սասանուել,  
Աստուած կ'օգնի նրան առաւօտից մինչեւ առաւօտ.  
<sup>7</sup> եթէ հեթանոսները խռովոււմ են եւ Թագաւորութիւնները սասանոււմ,  
Նրա ձայնը հնչում է եւ երկիրը վրդովոււմ:

<sup>8</sup> Տիեզերքի Տէրը միշտ մեր հետ է,  
մեր ապաւէնն է Յակոբի Աստուածը:

<sup>9</sup> Եկէք եւ տեսէք Տիրոջ գործերը,  
Նա է՝ որ զարմանքով լցնում է երկիրը:

<sup>10</sup> Դադարեցնում է պատերազմները մինչեւ աշխարհի ծայրերը,  
նետերն ու աղեղները կտարում եւ այրում է վահանները:

<sup>11</sup> «Կանգ առէք եւ իմացէք՝ որ ես եմ Աստուած,  
բարձրեալ՝ հեթանոսների մէջ, բարձրեալ՝ երկրի վրայ»:

<sup>12</sup> Տիեզերքի Տէրը միշտ մեր հետ է,  
մեր ապաւէնն է Յակոբի Աստուածը:

